

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Ավտոապահովագրողների
Բյուրոյի անդամների ընդհանուր ժողովի
30/04/2019թ. թիվ 1-Լ որոշմամբ

Փոփոխված է

--/--/2021թ թիվ -Լ որոշմամբ

Հայաստանի Ավտոապահովագրողների
Բյուրոյի անդամների ընդհանուր ժողովի
նախագահ

_____ Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

«--» -----ի 2021թ.

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

_____ Մարտին Գալստյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ
(ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԵՐՔԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴԻՎՈՂ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ)

ԵՐԵՎԱՆ - 202119

1. Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոն (այսուհետ՝ Բյուրո) ստեղծում և վարում է ԱՊՊԱ համակարգում հրապարակվող և ապահովագրական ընկերությունների և (կամ) ՀՀ կենտրոնական բանկի ներքին օգտագործման համար տրամադրվող վիճակագրության մատրիցա (այսուհետ՝ մատրիցա)՝ սույն կանոնների **Հավելված 1-ով** սահմանված ձևով և բովանդակությամբ, որը հրապարակվում է Բյուրոյի պաշտոնական ինտերնետային կայքի «Իրավական ակտեր» բաժնի «Բյուրոյի կանոններ» ենթաբաժնում: Ընդ որում՝ մատրիցայի «Ընթացիկ հասանելիություն» անվանումով սյունակներում արտացոլված տեղեկատվությունն ըստ անհրաժեշտության պարբերաբար թարմացվում են Բյուրոյի կողմից՝ հիմք ընդունելով տվյալ պահին Բյուրոյի կողմից համապատասխան տվյալի ստացման տեխնիկական հնարավորությունները, և մատրիցայի թարմացված տարբերակը փոփոխության նույն աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է Բյուրոյի կայքի՝ սույն կետում նշված միևնույն մասում:

2. Բյուրոն ամսական պարբերականությամբ՝ մինչև յուրաքանչյուր ամսվանը հաջորդող ամսվա 10-րդ աշխատանքային օրը իր ինտերնետային կայքի «Վիճակագրություն» բաժնում հրապարակում է տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև հաշվետու ժամանակահատվածի վերջին օրն ընկած ժամանակահատվածի ընթացքում ԱՊՊԱ ոլորտում իրականացված գործառնությունների վերաբերյալ վիճակագրական հաշվետվություն՝ սույն կանոնների համապատասխանաբար **Հավելված 2-ով**, **Հավելված 3-ով** և **Հավելված 4-ով** սահմանված ձևերով և բովանդակությամբ (այսուհետ՝ հրապարակվող հաշվետվություններ):

3. Հրապարակվող հաշվետվություններում արտացոլվող տեղեկատվության ստացման համար Բյուրոն առաջնահերթ օգտվում է ԱՊՊԱ միասնական տեղեկատվական համակարգում և այլ էլեկտրոնային տեղեկատվական համակարգերում (այսուհետ՝ Միասնական տեղեկատվական համակարգ) առկա համապատասխան տեղեկատվության աղբյուրներից, եթե դրանք ամբողջապես արտացոլում են (կարգավորումների համաձայն պետք է արտացոլեն) հրապարակվող տվյալի համար հիմք հանդիսացող տեղեկությունները: Հրապարակվող հաշվետվությունների մեջ ներառված, սակայն Միասնական տեղեկատվական համակարգում բացակայող տվյալները Բյուրոն ստանում է իր անդամ ապահովագրական ընկերություններից (այսուհետ՝ ընկերություններ)՝ համապատասխան հաշվետվությունների ստացման միջոցով: Ընդ որում՝






1) այդ հաշվետվությունների ձևը, ինչպես նաև դրանց լրացման հրահանգը հաստատվում և պարբերաբար փոփոխվում է Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից՝ հաշվի առնելով սույն կետով նախատեսված Միասնական տեղեկատվական համակարգից տվյալների ստացման ընթացիկ հնարավորությունները,

2) ապահովագրական ընկերությունների համար հաշվետվությունների ձևերը կիրառելի են (գործողության մեջ են մտնում) Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից ապահովագրական ընկերություններին ուղարկված ծանուցման մեջ նշված ժամկետներում,

3) ապահովագրական ընկերությունները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար հաշվետվությունը Բյուրոյին ուղարկել մինչև տվյալ ամսվանը հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային օրը՝ «xls» կամ «xlsx» ձևաչափով՝ Սի-Բի-Էյ-նեթ համակարգի միջոցով

կամ ընկերության իրավասու էլեկտրոնային հասցեից Բյուրոյի իրավասու էլեկտրոնային հասցեին ուղարկելու միջոցով: Ընդ որում, ներկայացվող ֆայլերի անունները պետք կազմված լինեն հետևյալ սկզբունքով՝ «APPA01XXYYMM», որտեղ՝ XX-ը ապահովագրական ընկերության ԱՊՊԱ վկայագրերի սերիան է, YY-ը՝ հաշվետու տարին (երկուական սիմվոլով), MM-ը՝ հաշվետու ամիսը (երկուական սիմվոլով):

4. Մատրիցայում արտացոլված տեղեկատվության՝ ապահովագրական ընկերություններին (ընկերությունների կողմից առարկություններ չներկայացվելու դեպքերում) և (կամ) ՀՀ կենտրոնական բանկին մեկանգամյա տրամադրման համար (համապատասխան պահանջը կամ անհրաժեշտությունն առաջանալու դեպքերում) Բյուրոյի գործադիր տնօրենը կարող է հաստատել նաև մեկանգամյա հաշվետվությունների ձևեր, որոնցում արտացոլված տեղեկությունները Բյուրոյին ներկայացվում են Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից ապահովագրական ընկերություններին ուղարկված ծանուցման մեջ նշված ժամկետներում: Ընդ որում, մեկանգամյա հաշվետվությունների ձևը սահմանելիս նույնպես հաշվի են առնվում սույն կանոնների 3-րդ կետում նշված՝ Միասնական տեղեկատվական համակարգից տվյալների ստացման ընթացիկ հնարավորությունները:

 <p style="text-align: center;">ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՊՊԱ ոլորտի մի շարք ցուցանիշների վերաբերյալ</p>								
Հաշվետու ժամանակահատված՝ 20__ թ. հունվարի 1-ից մինչև 20__ թ. _____)								
1	Ցուցանիշ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՊԱ ՀԱՄԱԿԱՐԳ			ԸՍՏ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ			
		Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում	Հաշվետու ժամանակահատվածում	 ԱՃ  Նվազում	1	2	...	
1 ԱՊՊԱ պայմանագրերի կնքման գործընթաց								
1.1	Գործող ԱՊՊԱ պայմանագիր ունեցող տրանսպորտային միջոցների բանակ (Հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ)							
1.2	Կնքված ԱՊՊԱ պայմանագրեր	Քանակ						
		Ապահովագրավճար (ՀՀ դրամ)						
		Այդ թվում՝ առցանց եղանակով կնքված Ընդհանուր բանակում տեսակարար կշիռ						
1.3	Գործողության մեջ մտած ԱՊՊԱ պայմանագրեր	Քանակ						
		Ապահովագրավճար (ՀՀ դրամ)						
1.4	Դադարեցված ԱՊՊԱ պայմանագրեր	Քանակ						
		Վերադարձված կամ վերադարձման ենթակա ապահովագրավճարներ (ՀՀ դրամ)						
2 ԱՊՊԱ ոլորտում կատարված հատուցումների գործընթաց								
2.1	ԱՊՊԱ համակարգ ներկայացված հատուցման դիմումների բանակ							
2.1.1 ԱՊՊԱ համակարգում գրանցված պատահարների բանակ								
2.2	ԱՊՊԱ համակարգում կարգավորված հատուցման դիմումներ	Քանակ	Ընդհանուր					
			Անձնական					
			Գույքային					
		Գումար (ՀՀ դրամ)	Ընդհանուր					
			Անձնական					
			Գույքային					
Միջին հատուցում (ՀՀ դրամ)	Ընդհանուր							
	Անձնական							
Պատահարների պարզեցված գրանցման միջոցով	Քանակ							
	Գումար							
2.3	ԱՊՊԱ համակարգում չբավարարված պահանջներ	Մերժված դիմումների բանակ						
		Հատուցումից հրաժարված դիմումների բանակ						
3 ԱՊՊԱ ոլորտում ստանձնած պարտավորությունները կատարելու նպատակով ձևավորված պահուստները (ՀՀ դրամ)								
(Հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ)								
3.1	Տեխնիկական պահուստները	Զվաստակած ապահովագրավճարների պահուստ						
		Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ						
		Տեղի ունեցած, սակայն դեռևս Ապահովագրողին չներկայացված պահանջների պահուստ						
3.2	Տեխնիկական պահուստների փոփոխությունները նախորդ տարվա վերջին օրվա համեմատությամբ	Զվաստակած ապահովագրավճարների պահուստ						
		Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ						
		Տեղի ունեցած, սակայն դեռևս Ապահովագրողին չներկայացված պահանջների պահուստ						
4 ԱՊՊԱ ոլորտի վնասաբերությունը (Հատուցումների մակարդակը) (%)								
4.1	Վնասաբերություն							
Այլ ցուցանիշներ (Ներկայացվում է տարեկան կտրվածքով)								
5	Ցուցանիշ	20__ թ.	20__ թ.	 ԱՃ  Նվազում				
5.1	Տարեվերջի դրությամբ գործող ԱՊՊԱ պայմանագրերով Ապահովագրողների դասերի բաշխվածքը	Բոնուսային դասերում գտնվող Ապահովագրողների բանակ						
		Մալուսային դասերում գտնվող Ապահովագրողների բանակ						
		Բազիսային դասում գտնվող Ապահովագրողների բանակ						
5.2	Վթարների տարեկան հաճախականությունը (ՀՀ-ում տարեկան յուրաքանչյուր օրերորդ-ավտոմեքենան է ունենում պատահար)	մինչև 100,000 ՀՀ դրամ- գույքային հատուցումներով վթարներով						
		100,000 ՀՀ դրամից բարձր- հատուցումներով վթարներով						
		Վճարված բոլոր հատուցումների վթարներով						